600.0048.16.03.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2016 թվականի №48Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի №391Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2015 թվականի նոյեմբերի 6-ի N00106/15-U13 և դեկտեմբերի 7-ի N00112/15-U13 գրությունները, որոնցով Ընկերությունը, հաշվի առնելով, որ ամերիկյան ստանդարտի DECT (Digital European Cordless Telecommunications) տեխնոլոգիայի անլար հեռախոսային սարքավորումների օգտագործման արդյունքում Ընկերությանը տրամադրված 1920-1935ՄՀց/2110-2125ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածներում առաջանում են խանգարումներ և Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով այդ հեռախոսասարքերի համատարած օգտագործումը 1920-1930ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածում անհամատեղելի է հանրային շարժական կապի ցանցի ռադիոէլեկտրոնային միջոցների շահագործման հետ, խնդրում է Ընկերությանը տրամադրված 1920-1935ՄՀց/2110-2125ՄՀց ռադիոհաճախակա-նությունների հատվածները ժամանակավոր փոխարինել 1965-1980ՄՀց/2155-2170ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածներով,

բ) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2015 թվականի նոյեմբերի 20-ի N09/11.1/13047-15 գրությամբ ներկայացված՝ 1920-1930ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածում առկա խանգարումները հավաստող էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքները,

գ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2015 թվականի դեկտեմբերի 15-ի՝ Նախարարությանը հասցեագրված ՈՌՆ/2.2-23/788-15 գրությունը, որով Հանձնաժողովը,

հաշվի առնելով, որ 1920-1935ՄՀց/2110-2125ՄՀց ռադիահոճախականությունների հատվածներում առկա խանգարման աղբյուրների հայտնաբերման, խանգարման աղբյուր հանդիսացող սարքավորումների աշխատանքի դադարեցման, ինչպես նաև դրանց ներմուծման, իրացման և օգտագործման հարցերը հնարավոր է լուծել Հայաստանի Հանրապետության պետական մարմինների և հանրային շարժական կապի օպերատորների համատեղ գործողությունների ծրագրի մշակման և իրականացման արդյունքում, որը պահանջում է տևական ժամանակ, հայտնել է, որ նախատեսում է Ընկերությանը տրամադրված 1920-1935ՄՀց/2110-2125ՄՀց ռադիոհաճախակա-նությունների հատվածները փոխարինել 1965-1980ՄՀց/2155-2170ՄՀց ռադիոհաճախա-կանությունների հատվածներով՝ միաժամանակ առաջարկելով շահագրգիռ պետական մարմինների հետ կազմակերպել քննարկում՝ 1920-1935ՄՀց/2110-2125ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածներում առկա խանգարման աղբյուրների բացառման հարցերի լուծմանն ուղղված գործողությունների ծրագիր մշակելու նպատակով,

դ) Նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N01/11.1/15572-15 գրությունը՝ Ընկերությանը տրամադրված 1920-1935ՄՀց/2110-2125ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածները 1965-1980ՄՀց/2155-2170ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածներով փոխարինելու համաձայնության վերաբերյալ, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «գ» ենթակետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը Հանձնաժողովը որոշում է.

1. Հանձնաժողովի 2007 թվականի հոկտեմբերի 1-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №391Ա որոշման՝

   1) ամբողջ տեքստում «2110-2125ՄՀց/1920-1935ՄՀց» թվերը փոխարինել «2155-2170ՄՀց/1965-1980ՄՀց» թվերով.

   2) 2-րդ կետով հաստատված №0177 թույլտվության պայմանների 3-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.6 կետով.

«3.6 Լիցենզավորված անձը 1965-1980ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման ընթացքում էլեկտրամագնիսական համատեղելիություն ապահովելու նպատակով պարտավոր է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 14-ի N517-Ն որոշմամբ հաստատված՝ ռադիոհաճախականությունների շերտերի կառավարական նշանակության սպեկտրի օգտագործման իրավասություն ունեցող սուբյեկտների հետ»:

2. 1920-1935ՄՀց/2110-2125ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածներում առկա խանգարման աղբյուրների բացառմանն ուղղված աշխատանքների իրականացումից հետո Հանձնաժողովը կարող է փոփոխություն կատարել իր 2007 թվականի հոկտեմբերի 1-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №391Ա որոշման մեջ՝ 1965-1980ՄՀց/2155-2170ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածները փոխարինելով 1920-1935ՄՀց/2110-2125ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
16 մարտի 2016թ.
ժամը 16 00